

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**  
**GOVERNMENT OF THE REPUBLIC OF ARMENIA**  
**ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ՎԱՐՇՈՒԹՅՈՒՆ**  
**DEPARTMENT OF INFORMATION AND PUBLIC RELATIONS**

**«Մենք այդ շքեղությունը չունենք, որ մինչև հունվարի 8-ը հանգստանանք ու հետո լավ ապրենք»։ Կարեն Կարապետյան**

Հարցազրույցին ներկա են գտնվել և մասնակցել ՀՀ փոխվարչապետ, միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարար Վաչե Գաբրիելյանը, տնտեսական զարգացման և ներդրումների նախարար Սուրեն Կարայանը, ֆինանսների նախարար Վարդան Արսլյանը, էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարար Աշոտ Մանուկյանը, տրանսպորտի նախարար Վահան Մարտիրոսյանը, գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյանը, ՊԵԿ նախագահ Վարդան Հարությունյանը:

– Պարոն վարչապետ, տարվա ավարտին մնացել է մի քանի օր: Կինդրեի գնահատելիք Ձեր և Ձեր թիմի կատարած աշխատանքը: Որքանո՞վ եք բավարարված: Հաջողվե՞ց անել այն ամենը, ինչը նախատեսել էիք այս տարվա համար, թե՞ կային անելիքներ, որ մնացին:

**Վարչապետ**– Այն տեսանկյունից, թե ինչ էինք ի սկզբանե պլանավորել, ինչ թվեր էինք ասել, այդպես մոտենալու դեպքում գնահատականը բավականին բարձր կլինի: Որովհետև ինչ թիրախներ դրել էինք այս տարվա համար, փաստացի բոլոր ցուցանիշները դրանցից բարձր են: Նշանակո՞ւմ է, որ մեր թիմն ամբողջությամբ գոհ է, ու բաներ չկան, որ կարող էինք ավելի արագ, ավելի էֆեկտիվ անել, իհա՛րկե՞նք: Դրա համար կարևոր է, թե ինչն ենք դնում գնահատականի մեջ. ինչ պլանավորել ենք՝ կատարել ու գերակատարել ենք: Ներքին հանգստություն կա՞, որ ամեն ինչ լավ է՞ ոչ: Բաներ կա՞ն, որոնցից բավարարված չենք՝ այո:

**Բ. Թ.**– Օրինակ, ինչի՞ց բավարարված չեք:

**Վարչապետ**– Բազմաթիվ բաներից:

**Բ. Թ.**– Գոնե 3 ամենակարևոր կետերը նշեք:

**Վարչապետ**– Եթե նշեմ, թիրախավորելու եմ այն մարդկանց, ովքեր համակարգում են տվյալ ոլորտները: Բայց անբավարարվածություն, որ կա մի քանից և որը թիրախավորված չէ, հետևյալն է՝ չգիտեմ՝ մենք կարողացել ենք հետադարձ կապը հասարակության հետ պահել, ինչը չափազանց կարևոր է, որ հասարակությունը հավատա ծրագրին, մասնակից դառնա, հավատա, որ սա է ճանապարհը, արդյոք մենք հասնո՞ւնք դրան, թե՞ ոչ: Որոշակի ոգևորություն բիզնես միջավայրում զգում ենք: Պարզ է, որ հասարակության խնդիրներն անհնար էր լուծել՝ նույնիսկ այս ցուցանիշներից ավելի

*Հեռախոս/ Ֆաքս՝ (374 10) 52-87-12,*

*Phone/Fax: (374 10) 52-87-12*

*Էլ. փոստ՝ [press@gov.am](mailto:press@gov.am)*

*Կայքէջ՝ [www.gov.am](http://www.gov.am)*

լինելու դեպքում: Նա, ում կյանքի որակը քիչ թե շատ լավացրել է, շատ չի բարձրաձայնում դրա մասին:

**Բ. Թ.-** Երբ Դուք նոր էիք նշանակվել վարչապետի պաշտոնում, Ազգային ժողովում հայտարարեցիք, որ տնտեսության վիճակը շատ վատ է: Հետո խնդիրների ախտորոշման փուլի մասին հայտարարեցիք: Իսկ որո՞նք էին այդ խնդիրների պատճառները:

**Վարչապետ–** Իսկ ի՞նչ է տալու դա:

**Բ. Թ.-** Առանց պատճառը հասկանալու՝ խնդիրը լուծելն անհնարին է:

**Վարչապետ–** Պատճառները բազմազան են՝ օբյեկտիվ իրավիճակ, ֆինանսական շուկաներում տիրող իրավիճակ, արտաքին ճգնաժամեր, կառավարման մեջ թերացումներ: Ֆիքսեցինք այդ ամբողջը, էջը փակեցինք, հիմա ունենք ստարտային մի վիճակ, որը պետք է ուղղենք, գնանք առաջ:

**Բ. Թ.-** Երբ հայտարարվեց այս տարի 850 մլն դոլարի ներդրումային ծրագրերի մասին, ի սկզբանե տպավորություն կար, որ խոսքը վերաբերում է օտարերկրյա ներդրումներին (ընդ որում, տևական ժամանակ շատերն այդպես էին կարծում): Հետո պարզվեց, որ դրա մեջ մտնում են վարկային ծրագրերը կամ բյուջետային միջոցների հաշվին իրականացված ծրագրերը...

**Վարչապետ–** Ուզում եմ ֆիքսենք, որ հետո չի պարզվել: Հենց այն պահին, որ մենք հայտարարել ենք 850 մլն դոլարի ներդրումային ծրագրերի մասին, առաջին հայտարարության ժամանակ ֆիքսել ենք հասցեները՝ բյուջե, վարկեր, համայնքային դրամաշնորհներ, և այլն, և այդ ամենը հստակ ձևակերպված էր՝ ըստ նախարարությունների, նաև՝ ըստ հոդվածների: Մենք չենք ասել՝ դրանք ներդրումներն են, ասել ենք՝ դրանք այն ծրագրերն են, որոնք իրագործվում են: Ու անընդհատ, երբ հարցնում էին՝ ի՞նչ եղավ, մենք պատասխանում էինք՝ այստեղ ներդրումներ կան, որոնք մենք չենք տեսնում (օրինակ, Բաբկեն Թունյանն առանձին ջերմոց է բացում, մենք չենք տեսնում): Երբ օգոստոսին մենք հաշվետվություն էինք տալիս, շատ ավելի ներդրումներ էինք տեսնում, բայց չէինք ընդգրկել դա այդ ներկայացված ցուցակի մեջ: Իսկ 850 մլն դոլարի մասին մենք նախընտրական քարոզարշավի ժամանակ ենք հայտարարել:

**Բ. Թ.-** Այսինքն՝ սա ստանդարտացված ցուցանիշ չէ, Ազգային վիճակագրական ծառայությունը նման ցուցանիշ չի հրապարակում: Ուզում էի իմանալ՝ 2016թ. այս 850 մլն դոլարի համադրելի ցուցանիշն ինչքա՞ն է եղել:

**Վարչապետ–** Թե որքան է եղել նախորդ տարի այդ նույն հոդվածների համանմանը, չեմ կարող այս պահին ասել: Ոչ թե թաքցնում եմ, այլ ուղղակի վիճակագրությունը չունեմ:

**Բ. Թ.-** Ռուսաստանաբնակ 30 գործարարներ տարվա սկզբին աջակցություն հայտնեցին Ձեր ծրագրերին ու պատրաստակամություն՝ ներդրումներ անել: Հիմա տարին արդեն ավարտվում է, կարո՞ղ եք մի քանիսն առանձնացրել, որոնք մեկնարկել են:

**Աշոտ Մանուկյան-** Առաջինը, որի մասին բազմիցս ասել ենք, Շնող ՀԷԿ-ի ծրագիրն է, որը նախնական գնահատականներով՝ կկազմի 150-200 մլն դոլար, դա խորհրդային ժամանակներից ի վեր չկառուցվող հէկ էր, որի նախագծումը սկսվել է դեռ խորհրդային

Ժամանակներում, բայց խորհրդային պետությունը չկարողացավ նույնիսկ ավարտել կամ նույնիսկ սկսել շինարարությունը:

Երկրորդ, արդեն սկսել ենք նախահաշվարկային աշխատանքները կոշտ թափոնների վերամշակումից էլեկտրաէներգիայի ստացման կայանի կառուցման համար: Ծրագիրը դեռ նախագծային, նախահաշվարկային փուլում է, բայց նախնական գնահատումներով՝ կկազմի 60-80 մլն դոլար, ընդ որում՝ սա կլինի Կոտայքի և Մեանի տարածաշրջաններում պիլոտային ծրագիր: Այն հետո կտարածվի մնացած բոլոր մարզերում:

Ներդրողների ակումբի ծրագրերից շատ կարևոր նշանակություն ունեցավ Հայաստանում առաջին արդյունաբերական նշանակության արևային կայանի կառուցումը: Իր տեսակի մեջ լինելով եզակի՝ այն խթան հանդիսացավ, և դրանից 6 ամիս անց Հայաստանում հայտնվում են նոր արևային կայաններ:

Մի կարևոր հանգամանք էլ նշեմ, այդ տիպի կայանների կողմից արտադրվող էներգիայի ծավալների մեծացմանը զուգահեռ՝ ի հայտ է գալիս այդ էլեկտրաէներգիան կուտակելու անհրաժեշտություն: Հակառակ դեպքում մենք պետք է արտադրենք ու կորցնենք, քանի որ հնարավորություն չունենք այդ պահին սպառելու: Եվ հենց դրա հետ է կապված ներդրողների ակումբի հաջորդ ծրագիրը, որն այս պահին քննարկվում է TESLA-ի հետ, զուգահեռ՝ նաև այլ արտադրանքի հետ. փորձում ենք նաև կառուցել կուտակիչ կայաններ: Առաջին պիլոտայինը կլինի Դումաշենում՝ մինչև 15 մեգավատտ հազորությամբ կուտակիչ կայանի կառուցում: Մրա նախնական արժեքը 15-17 մլն դոլար է: Այս 4 ծրագրերն արդեն ընթացքի մեջ են, նախագծային, նախահաշվարկային փաստաթղթերի մշակման փուլում են:

**Վարչապետ**- Եթե մեզ հաջողվի իրականացնել այս վերջին ծրագիրը, դա սկզբունքորեն կփոխի մեր էներգետիկ անվտանգությունը: Թեպետ էներգետիկ անվտանգության տեսակետից մեր երկիրն առանց այն էլ Եվրոպայի պետությունների մեծամասնությունից շատ ավելի անվտանգ է, այսինքն՝ ֆորսմաժորային պայմաններում գազի մատակարարում, և այլն: Ինչպես պարոն Մանուկյանն ասաց՝ արևային էներգետիկայի զարգացումը կունենար սահման, եթե մենք կուտակիչ ակումուլյատորների խնդիրը չենք լուծում, որովհետև ռեակտիվ հզորության սպառման խնդիր կա:

**Բ. Թ.**- Իսկ այս կուտակիչների ծրագիրը չի՞ հակասում «Գազարումի» շահերին:

**Վարչապետ**– Ոչ, շուկա է: Ամեն մեկը պետք է փորձի շուկային արձագանքել: «Գազավիկները» պետք է մտածեն՝ ոնց են իրենց վաղվա օրը կառուցելու:

**Աշոտ Մանուկյան**– Պարոն վարչապետը նշեց էներգետիկ անվտանգության մասին, այստեղ մի շատ կարևոր հանգամանք կա, որը ոչ ոք չի նկատում: Տեսեք՝ մենք միշտ ասում ենք, որ մեր ներքին սպառման կառուցվածքում 33 տոկոսը կազմում է գազային էներգիան, 33 տոկոսը՝ միջուկային էներգիան, 33 տոկոսը՝ հիդրոէներգիան: 2016թ. վերջից մինչև այս տարվա վերջ, ես հիմա կոնկրետ թիվը չեմ նշի, որովհետև թիվը կունենամ 10 օրից, 1 կվտժ-ի արտադրության համար գազի տեսակարար ծախսը զգալիորեն նվազել է: Մենք շատ ավելի քիչ գազով շատ ավելի շատ էներգիա ենք արտադրում: Հիմա մենք Երևանի ՋԷԿ-ի երկրորդ բլոկն ենք կառուցում, որն առնվազն 20 տոկոսով այսօրվա մակարդակից կնվազեցնի գազի ծախսը 1 կվտժ-ի հաշվարկով:

**Վարչապետ**– Սա էլ նրա վերաբերյալ, որ ամբողջը «Գազպրոմն» է անում: Բացի դրանից՝ ակումբն այսօր քննարկում է, և փաստացի ներդրում ունի նաև թեթև արդյունաբերության մեջ: Բացի դրանից՝ ակումբի հետ մյուս տարի քննարկելու ենք փոքր և միջին ջրամբարների կառուցման ծրագիրը: Ընդհանուր տրամաբանությունն այն է, որ մեծ ջրամբարներ չկառուցենք: Որտեղ ջրի պահպանման ծախսերը շատ են, աշխարհագրությունը մեծ է, միջավայր է ձևավորվում, նաև ջրամատակարարն ինքը կառուցում է, ինքը շահագործում է:

Քննարկվում է նաև Հայաստան-Վրաստան բարձրավոլտ օդային գծի կառուցման մեջ մասնակցությունը, որտեղ մենք պետք է վերցնե՞ինք վարկը, իսկ հիմա մասնավորի հետ այդ ռիսկերը կիսելու ենք:

Եվ բազմաթիվ այլ ծրագրեր կան, որոնք քննարկման փուլում են: Ես կարծում եմ, որ այդ ակումբը և՛ հետաքրքիր դրայվերի նշանակություն ունի, և՛ ներգրավման նշանակություն ունի, և՛ մասնակիցներին ընդլայնելու հնարավորություն ունի (վերջերս մենք Սամվել Կարապետյանի հետ խոսել ենք, որ նոր մարդիկ ենք ներգրավվում), և՛ նաև՝ բիզնեսի նոր մշակույթ է բերում: Ինչպես պարոն Մանուկյանը նշեց, ամենակարևորը խոշոր ենթակառուցվածքային ծրագրերն են, որտեղ մասնավորը չէր մտնում: Այս փաստը շատ կարևոր է:

**Բ. Թ.**– Բավականին երկար ժամանակ է՝ գործում է ներդրումային ծրագրերի կայքը, որտեղ հավաքագրվել են տարբեր ներդրումային ծրագրեր, մշակվել ու ներկայացվել էին ֆինանսավորողներին, որպեսզի, եթե հետաքրքրում է, մարդիկ ներդրումներ անեն: Այս ընթացքում հետաքրքրություն ընդհանրապես եղե՞լ է այդ ծրագրերի նկատմամբ, ներդրումներ անողներ եղե՞լ են:

**Վարչապետ**– Ես երկու խոսք ասեմ, ընդհանրապես ներդրումների մասին և հասարակության սպասելիքների մասին, թե ինչ եղան ներդրումները, բա ասում էիք՝ ներդրումներ կբերենք, և այլն:

Առաջին խնդիրը, որ մենք մեր առջև դրել ենք՝ ներքին ներդրողին ոգևորելն է, որ նա աշխատի: Այդպիսի երկիր գոյություն չունի, որ, երբ ներքին ներդրողը պասիվ է, արտաքին ներդրողը գալիս է: Ներքին ներդրողին ոգևորելու համար փորձել ենք մաքսիմալ հեշտացնել պայմանները: 2017 թվականի այս մակրոտնտեսական ցուցանիշները, որ ունենք, համախմբված գործողությունների մի շարք է: Հարկային-մաքսայինը սահմանին խնդիրներ չի ստեղծում, հարկայինը չի ճնշում, բիզնեսմենն ակտիվ է:

Մենք այսօր մարզային ծրագրերն ամփոփում ենք, ունենք վիճակագրություն, որ 100 ծրագրից 24-ն արդեն իրագործվել է, ևս 19-ը քննարկման փուլում է: Զուտ վիճակագրության առումով դա, կարող է, լավ թիվ չէ, բայց մարզային օղակների մեջ տնտեսական բաղադրիչը սարսափելի մեծ գործոն է դարձել նրանց աշխատանքներում: Հստակ ձևակերպել են, թե սեփական եկամուտն ինչպես է լինելու, պահպանությունն ինչպես է լինելու, գյուղատնտեսական ծրագրերը, որ սուբսիդավորել ենք, մրցակցություն է լինելու մարզպետների մեջ, թե քանի հոգի են այս ծրագրերին մասնակցում, ինչքան ներդրում են նախատեսում բերել: Մենք այսօր անգամ մեր սեփական գույքը պատրաստ ենք անվճար տալ գործարարին՝ որոշակի հայտանիշների դեպքում. Արթիկում և Ապարանում նման օրինակներ ունենք:

Հիմնական խնդիրն այն էր, որ մեր ներքին պոտենցիալ ներդրողին արթնացնեինք, որ մեր բոլոր համայնքապետերը հասկանան, որ իրենց քաղաքում, համայնքում բիզնես ունենալը միայն կառավարության գործը չէ: Բազմաթիվ օրինակներ ունեինք, որ համայնքների ղեկավարները բերում էին ծրագիրը, թողնում էին կառավարությունում ու գնում էին: Մենք չենք ասում՝ մեր պատասխանատվությունը չէ: Բայց երբ համայնքապետերը հասկանում են, թե իրենց համայնքում բիզնես-միջավայրը լավն է, թե՞ լավը չէ, բիզնեսը զարգանում է, թե՞ ոչ, ինքն ընդառաջ է գնում բիզնեսին, թե՞ ոչ, դրանից բոլորը միայն շահում են: Ես վստահ եմ, որ հետևողական աշխատանքի դեպքում 2018թ. մարզային ծրագրերը որակապես այլ են լինելու:

**Բ. Թ.-** Պարոն վարչապետ, եթե այդ խնդիրը երկու մասի բաժանենք՝ բիզնես ծրագիր ստեղծել, մշակել և ֆինանսավորում գտնել, մեզ մոտ այդ երկու խնդիրներից ո՞րն է ավելի սուր դրված:

**Վարչապետ**– Բիզնես ծրագիրը մշակելը:

**Բ. Թ.-** Այսինքն՝ գումարը կա, բիզնես ծրագրերը չկա՞ն:

**Վարչապետ**– Այո, բիզնես ծրագիրը քիչ են, բիզնես մտածելակերպը դեռ այդքան զարգացած չէ:

**Բ. Թ.-** Հիմա կոնկրետ այդ ներդրումների կայքում կան մի քանի տասնյակ ծրագրեր, փողը կա՞:

**Վարչապետ**– Այնպես չէ, որ փողն անվերջ է: Բոլորն այսպես են հասկանում՝ 3 միլիարդանոց ծրագիր եմ բերել, 3 միլիարդը սվեք: Իսկ ո՞րն է գործարարի ներդրումը, ի՞նչ պատասխանատվություն կամ ռիսկեր կան: Այդ մասին չի նշվում:

**Սուրեն Կարայան**– Կայքը հարթակ է, որտեղ ներկայացված են բիզնես ծրագրեր՝ 2 մասից: Մեկը՝ հնարավորություն ենք ստեղծել, որ մասնավոր հատվածն իր ներդրումային ծրագրերը ներկայացնի, մյուսը՝ մենք՝ որպես պետություն, մեր այն ենթակառուցվածքային և խոշոր ծրագրերը, որ հնարավոր է՝ հետաքրքրեն մասնավոր հատվածին, այդ ծրագրերն ենք դրել: Ունենք երկու արդյունք. առաջինը, որ մասնավոր հատվածը ոգևորվեց և ծրագրեր ներկայացրեց, ժամանակի ընթացքում հետևել ենք, իր կողմից ներկայացված ծրագրերի որակը փոխվեց: Երկրորդ արդյունքն այն է, որ Big 4-ից 2 կազմակերպություն՝ KPMG-ն և Deloitte-ն, ևս հետաքրքրված են: Իրենք պայմանավորվել են մասնավորի հետ, իրենք կազմել են մանրամասն բիզնես ծրագիր, և իրենք այդ ծրագրերն արդեն PR են անում, որպեսզի դրանց համար ներդրումներ գտնեն:

**Բ. Թ.-** Ի՞նչ ծավալի ներդրումների մասին է խոսքը:

**Սուրեն Կարայան**– KPMG-ն վերցրել է ներդրումային ծրագիր, որի արժեքը 120 մլն դոլար է, Deloitte-ը ընտրել է 2 ծրագիր, որոնք միասին մոտավորապես 80 մլն դոլար են կազմում: Մենք ունենք նաև կոնկրետ մեկ ծրագիր, որը եղել է կայքում և ֆինանսավորվել է, գյուղատնտեսության ոլորտում է, ջերմոցային ծրագիր էր: Ունենք կոնկրետ հետաքրքրություն 2-3 ծրագրերի հետ կապված, խոշոր շինարարական ծրագրեր են, որոնց շուրջ հիմա բանակցում ենք:

**Բ. Թ.-** Պարոն վարչապետ, խոսում էիք ներքին ներդրումների մասին: Կարծում եմ՝ կհամաձայնեք նաև, որ որպեսզի օտարերկրացին այստեղ ներդրումներ անի, պետք է

ներքինն իրեն օրինակ ծառայի: Հիմա, կներեք, իհարկե, Ձեր անձնական օրինակով հարցս տամ. Ձեր գույքի և եկամուտների հայտարարագրում բավականին մեծ դրամական միջոցներ եք հայտարարագրել, այսինքն՝ ենթադրում եմ, որ դրանք ազատ միջոցներ են: Իսկ հարմար ծրագրեր չկա՞ն, որ դրանցում ներդրումներ անեք:

**Վարչապետ**– Կան, և անելու եմ, և անում եմ, բայց ես չեմ անում, հիմա ո՞նց են ասում՝ իմ ընտանիքի անդամներն են անում: Գյումրիում ծրագիր կա, մտածում եմ՝ Վանաձորում նույնպես նման ծրագիր անել զբոսաշրջության զարգացման համար, և այլ ծրագրեր էլ կան, որոնք իմ ընտանիքի անդամներն անում են և անելու են:

**Բ. Թ.**– Միայն ծառայությունների՞ ոլորտում:

**Վարչապետ**– Ոչ, նաև արտադրություն կա, գյուղատնտեսություն:

**Բ. Թ.**– Դրա փակագծերը ե՞րբ կբացվեն:

**Վարչապետ**– Երբ իրագործվի:

**Բ. Թ.**– Բայց տեսանելի՞ ապագայում:

**Վարչապետ**– Տեսանելի, շատ տեսանելի:

**Բ. Թ.**– Հարկային օրենսգրքի մասին մի հարց տամ, որը ներդրումների հետ ուղղակի կապ ունի: Խոսքը շահաբաժինների հարկման մասին է: Մոտավորապես 1 տարի առաջ, երբ Արցախում ասուլիս էիք տալիս Արցախի վարչապետի հետ, ես Ձեզ հարցրի, որ հնարավոր է՝ Հարկային օրենսգրքը փոփոխությունների ենթարկվի, Դուք այն ժամանակ պատասխանեցիք, որ, եթե հաջողվի հարկերի հավաքագրումը կարգավորել և հասցնել նորմալ մակարդակի, հնարավոր է՝ վերանայվի: Հիմա, ինչպես երևում է, հարկերի առումով խնդիր չունենք: Շահաբաժինների հարկման վերանայման հնարավորությունը դեռ քննարկվո՞ւմ է, թե՞ ոչ, որովհետև արդեն տարին վերջացավ, ՀՕ-ն մի քանի օրից կմտնի ուժի մեջ:

**Վարչապետ**– Մենք հարկային, մաքսային մարմինների մեջ որոշակի փոփոխություններ ենք արել առաջին հերթին այն մասով, որտեղ զգացել ենք, որ բիզնեսի համար կարող է խնդիր լինել: Ընդհանրապես, Հարկային և Մաքսային օրենսգրքերը, որ մենք ընդունել էինք, մեկ անգամ էլ եմ ուզում ձևակարպել՝ տրամաբանական են և կյանքի կոչվելու իրավունք ունեն: Բայց մենք հասկանում ենք, որ այնտեղ կան դժգոհություններ, և օբյեկտիվ դժգոհություններ, մանավանդ՝ սպիտակ դաշտում աշխատող մարդկանց համար, բարձր աշխատավարձ ստացող մարդկանց համար, որ՝ դուք չեք խրախուսում սպիտակ դաշտում աշխատելը, պատժում եք մեզ: Մենք նաև բացատրել ենք, թե որն է տրամաբանությունը, որովհետև այն բազան, որը մենք ունեինք, դրա վրա պետք է կառուցեինք նոր հարկային, մաքսային ցանց, որի պարագայում կարողանանք սպասարկել այն վարկերը և այն ֆինանսական պարտավորությունները, որ ունեինք: Եվ դա ինչ-որ առումով ոչ թե անտրամաբանական լուծում էր, ճարահատյալ լուծում էր, երբ մենք բիզնեսի բեռը բարձրացնում էինք:

Սա նշանակո՞ւմ է, որ մենք երբևէ չենք անդրադառնալու Հարկային և Մաքսային օրենսգրքերին, և մանավանդ՝ այն դիվիդենտների մասը, որը դուք ասում եք, ո՛չ: Բայց դա մի պրոցես է, որ մենք 2018 թվականին էլ ենք որպես նշաձող դրել մեր առջև, հարկային, մաքսային մարմինների առջև. համարյա 100 միլիարդի չափով ավելացրել ենք

հավաքագրման խնդիրը, և այս կարգապահությունից, տնտեսական ակտիվությունից՝ շուկան ոնց է արձագանքելու, մենք նույնպես նայելու ենք: Մենք շատ տրամադրված ենք, որպեսզի Հայաստանում ձևավորվի այնպիսի բիզնես միջավայր, որ բիզնես անելը հեշտ լինի, բիզնես անողի համար մաքսիմալ կոմֆորտ լինի, բիզնեսմենն իրեն ապահով և անվտազ զգա, որ մեր ներքին ներդրողը ոգևորվի և իր հետ բազմաթիվ այլ ներդրողներ բերի:

**Վարդան Արամյան**- Նախ՝ Հարկային օրենսգրքի ընդունման ժամանակ մի ազդակ էլ նշեցինք, որ բոլոր այն կանոնները, որոնք ժամանակի ընթացքում ցույց կտան, որ կարող են խեղում մտցնել բիզնեսի կյանքում, ընդ որում, ոչ օբյեկտիվ ձևով, կվերանայենք:

Իսկ ինչ վերաբերում է հարկային քաղաքականությանը, մասնավորապես՝ դրույքների վերանայմանը, դա ավելի խորքային վերլուծություն է պահանջում, ասենք՝ եկամտային հարկը պետք է իջեցնես, թե՛ այլ հարկատեսակները, որպեսզի տնտեսության վրա դրական ազդես, բայց մյուս կողմից էլ՝ բյուջեի մեջ խնդիրներ չունենաս, որովհետև ամեն դեպքում բյուջեն պետք է նաև պարտքի կայունություն ապահովի: Հիմա այս տարվա ընթացքում ՊԵԿ-ի հետ միասին մի քանի խնդիր տեսանք, որոնք դրոշակ են բարձրացնում: Դրանցից մեկը վերաբերում էր նվազագույն շահութահարկի նորմին, մյուսը՝ շահաբաժիններին, երրորդը՝ տարաների ԱԱՀ-ով հարկման ռեժիմին, և այլն:

Հարկային օրենսգրքի մասով մենք մոտ 115 իրավական նորմերի փոփոխություն էինք առաջարկել, որի մեծամասնությունը (շուրջ 106-ը) շտկումներ ու հստակեցումներ էին : Հիմնական նպատակն էր, որպեսզի նաև ձևակերպումների մեջ տարրնկալումներ չլինեին: ՊԵԿ-ն էլ հայտարարել է, որ մեր գործողությունները պետք է շատ հստակ լինեն: Մենք որ գնում ենք տեսչական ստուգումների, խաղի կանոնները բոլորի համար միատիպ են, բայց օրենքն էլ պետք է այնպես լինի, որ տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք չտա: Դրա համար, բոլոր այն տեղերում, որտեղ, ըստ մեզ՝ կարող էր տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք տալ, դրանք մաքրեցինք: Իսկ հեշտացման, այսինքն՝ բովանդակային մասով մոտ 9 փոփոխություն կատարեցինք, այդ թվում՝ նաև հանրային սննդի ոլորտում:

Մենք 2 խումբ ունենք. Մեկը՝ վարչարարության հարցերով, որը ղեկավարում ՊԵԿ նախագահի տեղակալ Վախթանգ Միրումյանը, որը զուտ վարչարարական խնդիրներով է զբաղվում, և քաղաքականության մասով հարցերը իմ ներքո է՝ իմ տեղակալ Դավիթ Անանյանն է զբաղվում: Այդ երկու խմբերի աշխատանքի արդյունքում ստեղծված փաթեթների առաջարկների գերակշիռ մասը եկել է բիզնեսից:

**Վարչապետ**– Ավելին, այստեղ մի բան եմ ուզում շեշտադրել, որպեսզի ճիշտ ընկալվի. մենք այդ փոփոխություններով ոչ թե բյուջե շատ փող մտցնելու խնդիր ենք դրել, այլ խնդիր ենք դրել, որպեսզի հաշվառենք, որովհետև ինքը շղթայի վերջում է, և ամբողջ ցիկլը կրնկնի հաշվառման դաշտ: Նախագահը գործարարների հետ հանդիպման ժամանակ էլ հայտարարեց, որ 2018 թվականը մեզ համար հաշվառման սկզբունքային խնդրի լուծման դաշտն է: Ավելին, գործարարների հետ հանդիպման ժամանակ նաև նշվել է հետևյալը. երբ ՊԵԿ-ի ղեկավարը հանդիպել է գործարարների հետ՝ իր հրավերով, իրենք 22 առաջարկություն ունեին, որից 20-ն արդեն ՊԵԿ-ի կողմից կամ արված էր, կամ ընդունված էր, կամ անելու տրամադրություն կար:

Չափազանց կարևոր է ֆիքսել, որ, օրինակ, հարկային/մաքսայինը, քանի որ մեծ վիճակագրություն և հարկերից խուսափողների հետ աշխատելու փորձ ունի, շատ

դեպքերում կարող է մոտիվացված լինել կիրառել մի գործիքակազմ, որով, իր պատկերացմամբ, հարկերից խուսափողներին դաշտ կբերի: Մենք միշտ հետևյալ վարժությունն ենք անում. այդ գործիքակազմը նախ իմպլեմենտացիա կամ իմիտացիա ենք անում սպիտակ դաշտում աշխատողների վրա: Ու եթե սպիտակ դաշտում աշխատողի համար դա ստեղծում է պրոբլեմ, ապա, անկախ նրանից, թե ինչ ակնկալիք ունենք, որ անբարեխիղճ աշխատողից կարող է գալ բյուջե, մենք դրանից հրաժարվում ենք: Առաջնահերթությունը տալիս ենք սպիտակ դաշտում աշխատող օրինապահ հարկատուներին, որ նրանց համար խնդիրներ չստեղծենք:

**Բ. Թ.-** Երբ ասում եք՝ բիզնեսի առաջարկներն ընդունվել են, ո՞ւմ նկատի ունենք: Կան գործարարներ, ովքեր պնդում են, որ իրենց կարծիքը չէք լսում կամ հաշվի չէք առնում: Ինչպե՞ս եք ընտրում այդ գործարարներին, ում հետ երկխոսում եք: Ի՞նչ չափանիշներով:

**Վարչապետ-** Հարթակները կարող են իրենք ձևավորել. բայց այսօր էլ գործարարը մի քանի հարթակներ ունի՝ Հարկայինը, Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը (Բողոքարկման հանձնաժողովի ժամանակ ես դեպք չեմ հիշում, որ Ս. Կարայանը բիզնեսի շահերը չպաշտպանի), Ֆինանսների նախարարությունը, իմ աշխատակազմը:

Համենայն դեպս, մենք չզիտենք որևէ գործարար, ով առաջարկ է ուզում հնչեցնել և չզիտի՝ որտեղ դա անել: Իսկ եթե գործարարն ասում է՝ ես առաջարկություն ունեմ, բայց իմ դուռը չեմ թակել, չեմ հարցրել, չեմ կարծում, որ դա ճիշտ մոտեցում է:

Բացի այդ, մենք աշխատում ենք այն հարթակների հետ, որոնք իրենք են ձևավորում. օրինակ՝ Արսեն Ղազարյանի միությունը, Գազիկ Մակարյանի Միությունը, Հարկ վճարողների ասոցիացիան, առևտրաարդյունաբերական պալատները: Բոլորի հետ էլ աշխատում ենք:

Չեմ ասում, որ բոլոր առաջարկները մենք ընդունելու ենք: Բայց ես չզիտեմ գործարար, ով չիմանա՝ որ դուռը թակել, որպեսզի պետությունն իրեն լսի:

**Վաչե Գաբրիելյան-** Բոլոր առաջարկները հնարավոր չէ ընդունել: Շատ հաճախ հենց քննարկումների ընթացքում նույն գործարարները տեսնում են, որ իրենց առաջարկները հակասական են:

**Բ.Թ.-** Արտաքին առևտրի մասին. արդեն մի քանի օր է՝ գրեթե բոլոր հեռուստաալիքներով շեշտվում է, որ արտահանման ծավալն առաջին անգամ գերազանցել է 2 մլրդ դոլարը: Դա այդպես է: Սակայն, մյուս կողմից, ներմուծումն ավելի արագ է աճում, ինչը նշանակում է, որ արտաքին առևտրի բացասական հաշվեկշիռն աճում է: Բայց չէ՞ որ կառավարությունը խոստացել է առաջիկա տարիներին արտահանումը հասցնել ներմուծմանը: Նման տեմպերով դա ինչպե՞ս է հնարավոր, եթե հակառակն է տեղի ունենում:

**Վարչապետ-** Արտահանման և ներմուծման հարաբերակցությունն այժմ 1,7-ից մի քիչ բարձր է, ինչը վատ չի: Մա՛մեկ: Իսկ 2 մլրդ դոլարից ավելի արտահանումն իրոք տպավորիչ թիվ է, որովհետև 2016 թվականին ամբողջ տարվա ընթացքում արտահանել ենք 1,8 մլրդ դոլարից քիչ ապրանք: Եվ երրորդ՝ Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը ներկայացրել է, որ ներմուծման մեջ 51%-ից ավելին կապիտալ և շրջանառու միջոցներն են: Հիմա դուք ասում եք՝ ներդրումներ: Եթե այդ ներդրման



շրջանակներում հաստոց է գալիս Հայաստան, դա, բնականաբար, ներմուծման մեջ պետք է արտացոլվի:

**Բ.Թ.-** Պրն վարչապետ, ՏԶՆ նախարարությունից բացի՝ ներմուծման կառուցվածքի վերաբերյալ նման տվյալներ հրապարակում է նաև Ազգային վիճակագրական ծառայությունը: ԱՎԾ-ի տվյալներով՝ այս տարվա ընթացքում կապիտալ ապրանքները կազմել են ընդհանուր ներմուծման մոտ 15%-ը: Նախորդ տարվա համեմատ՝ ոչ մեծ աճ կա կապիտալ ապրանքների մասով: Սակայն, երբ կապիտալ ապրանքների գործոնը հանում ենք, մնացած ապրանքների մասով նույնպես ներմուծման աճն ավելի արագ է, քան արտահանմանը:

**Վարչապետ**– Դա նորմալ է, այդպես էլ պետք է լիներ: 10 տարի առաջ ունեինք 1:3 հարաբերակցություն. արտահանման յուրաքանչյուր 1 դոլարի դիմաց ունեինք 3 դոլար ներմուծում: Այժմ այդ հարաբերակցությունը 1:7 է: Դուք ինչպե՞ս եք պատկերացնում, որ հենց առաջին տարում արտահանումը հասներ ներմուծմանը:

**Բ.Թ.-** Ոչ որ մեկ տարվա մասին չի խոսում, խոստումը վերաբերում էր առաջիկա մի քանի տարիներին: Ինձ հակասությունն է հետաքրքիր՝ ինչպե՞ս կարելի է արտաքին առևտրի հաշվեկշիռը մեծացնելով՝ որոշակի տարիներ հետո ունենալ արտահանման և ներմուծման հավասար ծավալներ:

**Վարդան Արամյան**– Մեզ նման՝ զարգացող երկրների համար ընթացիկ հաշվի հաշվեկշռի գնահատված մակարդակ կա, որը կոչվում է կայուն մակարդակ: Դա կազմում է ՀՆԱ-ի 4-6%-ի չափով: Ընդ որում, այս 4-6%-ը միևնուսային է, այսինքն՝ ըստ կանոնի՝ ընթացիկ հաշվի հաշվեկշիռը հավասար է՝ խնայողություններ հանած ներդրումներ: Քանի որ դու զարգացող երկիր ես, քո խնայողություններն ավելի փոքր են, իսկ քեզ պետք են հարաբերականորեն ավելի մեծ ներդրումներ, որպեսզի զարգացած երկրներից արագ աճես: Ու որպեսզի դու կարողանաս հասնել զարգացած երկրներին, ներդրումները մշտապես պետք է աճեն և, բնականաբար, գերազանցեն խնայողություններին: Դու ստիպված օգտագործում ես դրա, արտաքին աշխարհի խնայողությունները: Ու սա քո ընթացիկ հաշվի հաշվեկշիռը բացասական է դարձնում: Որպեսզի զարգացող երկրները զարգացածների ետևից հասցնեն, բայց մյուս կողմից՝ տնտեսությունում երկարաժամկետ ժամանակահատվածում խեղումներ չտեսնեն, ընթացիկ հաշվի պակասությունը պետք լինի 4-6%: Մեզ մոտ մի պահ՝ ճգնաժամային շրջանում, այդ ցուցանիշը 3%-ից էլ ներքև իջավ, ու մենք ասել ենք, որ պետք է դա հետ գա: Այսինքն՝ նորմալ է, որ ներմուծման աճի տեմպերը մի որոշ ժամանակ ավելի բարձր լինեն, քան արտահանմանը, որ գանք նորմալ վիճակի:

**Սուրեն Կարայան**– Այո, նման խնդիր նախարարությունով դրել ենք մեր առջև, որ մեր արտահանման և ներմուծման կշիռները ՀՆԱ-ի նկատմամբ առաջիկայում հավասարվեն: Ու դա իրականանալի է: Բայց կրկին շեշտեմ՝ դա ոչ թե կառավարության խոստումն է, այլ ես եմ նման խնդիր դրել իմ կառույցի համար՝ որպես կարևորագույն նպատակ:

Իսկ այն, որ ներմուծման աճի տեմպն ավելի բարձր է, դա բնական է: Քանի որ երբ դիտարկում ենք ներմուծման կառուցվածքը, կեսից ավելին հիմնական միջոցներն են և միջանկյալ սպառման ապրանքները՝ հումք և այլն:

Իհարկե, նաև վերջնական սպառման ապրանքների ներմուծումն ավելացել է՝ կենցաղային տեխնիկա և նման այլ ապրանքներ, որովհետև պահանջարկը ավելացել է, մարդկանց գնողունակությունն աճել է:

**Բ.Թ.-** Գնողունակությունն է աճել, թե՛ պարզապես մաքսային վիճակագրությունն է բարելավվել: Որ եթե նախկինում սառնարանը բերում էին մեխի անվան տակ, հիմա սկսել են հենց որպես սառնարան էլ ձևակերպել:

**Սուրեն Կարայան-** Դա էլ կա, նա էլ: Այո, մաքսանենգությունը նվազել է, ու դա երևում է նաև ներմուծման ծավալների մեջ: Բայց մեզ համար կարևորն այս պահին այն է, որ մենք տարին կփակենք 23,8%-ից ավելի բարձր արտահանման աճով, ու բոլոր նախադրյալները տեսնում ենք, որ հաջորդ տարի նույնպես այդ տեմպերով կշարունակենք:

**Աշոտ Մանուկյան-** Տեսեք, մենք ունենք խոշոր ենթակառուցվածքային նախագծեր: Իրան-Հայաստան գիծը, որը մենք կառուցում ենք, արժեքը 107 մլն եվրո է: Դրա 70%-ը սարքավորումներ են, որոնք պետք է ներմուծվեն, որ կարողանանք կառուցել: Կամ Շնող ՀեԿ-ը, որի արժեքից մոտ 120 մլն-ը սարքավորումներ են: Ընդ որում, միշտ չէ, որ խոսքը սարքավորումների մասին է: Օրինակ, մետաղական կոնստրուկցիաները չեն մտնում կապիտալ ծախսերի մեջ, բայց պետք է բերենք, որ կառուցենք: Այսինքն՝ ինչքան շատ ենք աշխատում, բնական է, որ ներմուծումը պետք է ավելանա:

**Բ.Թ.-** Աղքատության մասով՝ 2016 թվականի աղքատության մակարդակի մասին Ձեզ հարց չեմ տա, որովհետև ըստ էության դա Ձեր կառավարության հետ կապ չունի: Բայց եկեք 2017 և 2018 թվականների վիճակը փորձենք կանխատեսել: Թոշակները, պետական հատվածի աշխատավարձերը չեն աճել ու չեն աճելու, իսկ գներն աճել են և աճելու են: Այսինքն՝ 2017 և 2018 թվականներին աղքատության մակարդակի էական նվազում դժվար թե լինի: Մյուս կողմից՝ խոստացել էք աղքատության մակարդակը մինչև 2022թ. նվազեցնել 12 տոկոսային կետով՝ հասցնել 18%-ի: 2 տարին հանենք, ստացվում է՝ 2019-2022 թվականներին աղքատության մակարդակը պետք է կտրուկ նվազի: Ինչի՞ հաշվին է դա լինելու:

**Վարչապետ** – Աշխատավարձի, թոշակների նվազագույն չափը չբարձրացնելը դեռ չի նշանակում, որ միջին աշխատավարձը կամ բնակչության եկամուտները չեն աճում: Մենք ունենք միջին աշխատավարձի 2.7% աճ: Այո, մենք ասել ենք, որ 12 տոկոսային կետով նվազեցնելու ենք հինգ տարում: Այո, առաջին տարում նվազումը քիչ է, սակայն դա նշանակում է, որ հաջորդ տարիներին էլ է այդպես լինելու: Իհարկե ոչ:

Մեր տնտեսության վիճակը, եթե պատկերավոր ասեմ, նման է չորացած, չմշակված դաշտի, որի վրայից մենք պետք է և՛ քարերը հավաքենք, և՛ ջրենք, և՛ պարարտանյութ տանք, որ հետո սերմը ցանենք և այդ սերմից օգուտ ստանանք: 2018 թվականը լինելու է շատ հետաքրքիր, բայց գուցե ավելի դժվար տարի, քան 2017-ը, որովհետև մենք այս տարի հետագա կայուն աճի համար անհրաժեշտ շատ հիմքեր դեռ չենք դրել: 2018-ին դա անելու ենք, օրինակ՝ կապիտալ ծախսերը 2017 թվականի համեմատ՝ 70%-ով ավելացրել ենք: Մենք պետք է մի քանի տարի քրտնաջան աշխատենք, հիմքերը ստեղծենք՝ սա է ամբողջ «գաղտնիքը»: Մա, իհարկե, չի նշանակում, որ մեկ տարում չենք կարող լուրջ թոխչք ունենալ աղքատության ցուցանիշի նվազեցման գծով, բայց հնարավոր է՝ առաջին մեկ կամ երկու տարվա ընթացքում էական բարելավում չլինի:

**Բ.Թ.-** Հենց սա է խնդիրը, շատերը Ձեր նշանակվելով՝ սպասում էին արագ փոփոխությունների: Դուք հայտարարում էիք, որ արագ փոփոխություններ չեն լինի, բայց ամեն դեպքում՝ 1 տարի անցել է, երկրորդ տարին էլ կանցնի... Բնակչությունը ե՞րբ կսկսի փոփոխություններ զգալ, այդ աճը ե՞րբ կսկսի շոշափելի ազդել մարդկանց կենսամակարդակի վրա:

**Վարչապետ**– Մենք ասել ենք՝ ամեն տարի գործողություններ ենք անելու, որ դրական փոփոխությունները զգացվեն: Բայց դա չի նշանակում, որ բոլորը միաժամանակ կզգան դա և նույն չափով. մեկը մի քիչ շուտ կզգա, մյուսը՝ ավելի ուշ: Կարծում եմ՝ 2019 թվականին շատ ավելի մեծ թվով մարդիկ կզգան, որ մենք տնտեսությունը տարել ենք և տանում ենք ճիշտ ուղղությամբ: Եթե մենք 2018, 2019 թվականներին նույն քաղաքականությունը վարենք, մարզպետներն ու համայնքապետերը աշխատեն այդ ուղղությամբ, ներքին ներդրողի ակտիվությունն աճի, պետական կառավարման համակարգում բյուրոկրատիան նվազեցնենք, օրենսդրական դաշտը բարելավենք՝ այդ ամենը ժամանակ է պահանջում:

Այնպես չի, որ բիզնեսն անմիջապես արձագանքում է մեր քայլերին, դու ինչ էլ ասես՝ գործարարները, լինելով ամենապրագմատիկ խավը, որոշակի դադար են վերցնում, որ հասկանան՝ ինչ է լինելու: Դրան գումարվում են բազմաթիվ այլ գործոններ, որոնք ընթացքը դանդաղեցնում են՝ ընտրություններ, հիմա էլ ասում են՝ ապրիլի 9-ը անցնի՝ տեսնենք: Անընդհատ մի պատճառ են գտնում, որ ամեն ինչ «երկուշաբթի օրվանից» սկսեն:

**Վաչե Գաբրիելյան**– Եթե նայենք տնտեսական աճի դինամիկան, մենք սկսել ենք ցածր պոտենցիալով և այսօր գնում ենք պոտենցիալից բարձր տնտեսական աճի: Դա նշանակում է, որ միջին տնտեսական աճը գնում է ոչ թե հավասարաչափ, այլ արագացումով, որովհետև ցածր պոտենցիալից ենք եկել: Աղքատության մակարդակի փոփոխությունն էլ պետք է լինի տնտեսական աճին զուգահեռ: Մեր տնտեսական աճի պոտենցիալը վերջին տարիներին ընկել էր մինչև 2-3%, իսկ մենք ենթադրում ենք՝ 5% և ավելի տնտեսական աճի գալ ավելի վերջում, նշանակում է՝ այդ աճի ազդեցությունը վերջում կումուլյատիվ է զգացվելու: Հավասարաչափ, աստիճանական տնտեսական աճ, զուտ տնտեսության բնույթից ելնելով՝ չի լինելու: Դրան հնարավոր է հասնել միայն վերաբաշխման շնորհիվ, սակայն դա էլ նպատակահարմար չի, որովհետև կվտանգի մակրոտնտեսական կայունությունը:

**Սուրեն Կարայան**– Աղքատության նվազման հետ կապված հիմնական շեշտադրումը դրվել է ոչ թե սոցիալական քաղաքականության վրա, այլ տնտեսական աճի՝ իհարկե, մեծ դեր վերապահելով սոցիալական ծախսերին: Այսօր մեր վերլուծությունները ցույց են տալիս, որ 1% տնտեսական աճն աղքատության մակարդակը նվազեցնում է 0.3 տոկոսային կետով: Մեր խնդիրն է, որպեսզի տնտեսական աճը լինի ավելի որակյալ, ավելի ներառական: Ի դեպ, կան երկրներ, որ 1% տնտեսական աճը հանգեցնում է աղքատության նվազեցման 1 տոկոսային կետով: Մենք 2 ուղղություններով էլ աշխատանքներ ենք իրականացնում՝ ունենալ կայուն 5% տնտեսական աճ, և դրան զուգահեռ՝ այնպես անել, որ դրա ազդեցությունն ավելի մեծ լինի եկամուտների վերաբաշխվածության տեսանկյունից:

**Վարչապետ**– Մի գործոն էլ նշեմ: Միգուցե բաժանումը շատ արհեստական է, բայց ես ինքս ինձ համար ճյուղերը բաժանել եմ այսպես՝ վերտիկալ և հորիզոնական: Ուղղահայացն այն ճյուղերն են. որոնք 1 դոլար կամ 1 աշխատողի դեպքում

առավելագույն արդյունք են տալիս (օրինակ՝ SS ոլորտ, high tech), իսկ հորիզոնականը՝ որոնք մեծ թվով աշխատատեղեր են ստեղծում (օրինակ՝ թեթև արդյունաբերություն, գյուղատնտեսություն): Ինչո՞ւ ենք մենք այսօր գյուղատնտեսությանն ու թեթև արդյունաբերությանը հատուկ ուշադրություն դարձնում. որովհետև այդ ճյուղերը մաքսիմալ աշխատատեղեր են ստեղծում, չնայած ՀՆԱ-ի մեջ հավելյալ արժեք ստեղծելու տեսանկյունից՝ արդյունավետությունը ցածր է, քան վերտիկալ ոլորտներում:

**Վաչե Գաբրիելյան**– Այդ առումով մի բան ավելացնեմ: Գործիքակազմը, որ այսօր գյուղատնտեսության ոլորտում կիրառվում է, այդտեղ տրամաբանությունը կառուցված է հիմնականում ներառական աճի վրա: Որովհետև, եթե ուշադրություն դարձնեք, մեզ մոտ աղքատության և պոտենցիալը բարձրացնելու տեսանկյունից ամենամեծ տեղը գյուղն է: Գյուղում բոլոր ծրագրերը, որոնք Իգնատի Առաքելյանն առաջ է տանում՝ սկսած սուբսիդավորման տարբեր տեսակներից, վերջացրած տեխնոլոգիաների ներառմամբ, ենթադրում են, որ ներառական աճի ամենամեծ ազդեցությունը կգա հենց այդ հատվածից:

**Վարչապետ**– Ավելին, ժողովրդագրության հետ կապված 2 թիվ նշեմ, որ ինձ զարմացրել է: Մեկ ընտանիքի հաշվով երեխաների քանակի առումով ունենք մի այսպիսի անտրամաբանական փաստ. քաղաքային բնակավայրերում այդ ցուցանիշը 1.60-ից բարձրացել է մինչև 1.65, գյուղական բնակավայրերում՝ 2.3-ից նվազել է մինչև 1.5: Այսինքն, ժողովրդագրական խնդիրներն էլ լրացուցիչ պատճառ են, որ գյուղին ավելի մեծ ուշադրություն դարձնենք:

**Բ.Թ.**– Պրն վարչապետ, այս ամբողջ գրույցի ընթացքում մենք հիմնվում ենք տվյալների վրա, որոնք հրապարակվում են Ազգային վիճակագրական ծառայության կողմից: Դմիտրի Մեդվեդևի հետ հանդիպման ժամանակ Դուք կասկած հայտնեցիք, որ այդ կառույցը որոշ ցուցանիշներ սխալ է ներկայացնում՝ նվազեցնում է...

**Վարչապետ**– Կասկած չեմ հայտնել, կատակ եմ արել: Մենք ընդունել ենք ՀՀ-ՌԴ առևտրաշրջանառության աճի ցուցանիշը 23.5%՝ մեր ԱՎԾ-ի տվյալներով: Մեդվեդևը հայտարարեց, որ իր տվյալներով՝ 30% է: Պատասխանեցի, որ մեզ դա ձեռնառու է, և իրականում դա ասված էր կատակով: Չէ՞ որ մենք մեր վիճակագրությունը չենք փոխել և շարունակում ենք հիմնվել նույն 23.5%-ի վրա:

**Բ.Թ.**– Խոսքը կոնկրետ այդ ցուցանիշին չի վերաբերում. ընդհանրապես մենք կարո՞ղ ենք հավատալ պաշտոնական վիճակագրությանը:

**Վարչապետ**– Հարկվող ոլորտների մասով՝ այո: Որովհետև մենք բազմաթիվ հետադարձ «սիգնալներ» ենք հետ ստանում: Իսկ օրինակ՝ գյուղատնտեսության մասով որոշակի կասկածներ կան, որովհետև չի հարկվում, և տվյալների ճշգրտության մասով խնդիրներ կան:

Ինչ վերաբերում է մեր 23.5%-ին և Մեդվեդևի հնչեցրած 30%-ին, ամբողջ աշխարհում այդ երևույթը կա: Վաչե Գաբրիելյանը մի առիթով ասաց, որ, եթե ամբողջ աշխարհի արտահանումն ու ներմուծումը գումարես, արդյունքը զրո չի դառնա: Օրինակ, մենք ապրանքը արտահանում ենք, այստեղ արժեքը ֆիքսում ենք 1 դոլար, հետո դրա վրա ավելանում է 20 սենտ տրանսպորտային ծախս և ներմուծող երկրում դառնում է 1,2 դոլար: Սա բազմաթիվ պատճառներից մեկն է:

Նորից ասեմ, մենք հիմնվում ենք այն վիճակագրության վրա, որը մերն է: Այնպես չի, որ Մեդվեդևի խոսելուց հետո մենք մեր տվյալները փոխել ենք:

**Վարդան Արամյան**– Եթե խոսում ենք մեր վիճակագրության որակի մասին, ապա այդ գնահատականը տալիս են միջազգային կառույցները: Հայաստանն Արժույթի միջազգային հիմնադրամի GDDS (General Data Dissemination System) և SDDS (Special Data Dissemination Standard) համակարգերի անդամ է: Մա նշանակում է, որ ԱՄՆ-ն գնահատում է, թե քո երկրի վիճակագրության ծածկույթը, մեթոդոլոգիան որքանով է որակյալ: Այսքանը բավարար է՝ որակի մասին պատկերացում կազմելու համար, իսկ այդ վիճակագրական շեղումները միշտ էլ լինում են:

**Բ.Թ.**– Աժ–ում ընդունված օրենքների 88%-ի հեղինակը կառավարությունն է, Աժ–ի միայն 12%-ն է: Այս հարաբերակցությունը, Աժ–ի պասսիվությունը նորմալ էք համարում:

**Վարչապետ**– Այո, այդտեղ խնդիր չեմ տեսնում: Ինչո՞ւ է պասիվ: Այն, ինչ որ տարբեր ինդիկատորների միջոցով իրենք են զգում, իրենք են նախաձեռնությամբ հանդես գալիս, որը մենք ենք զգում՝ մենք ենք առաջ քաշում: Վաղ-մյուս օրն այդ հարաբերակցությունը կարող է որոշ չափով փոխվել: Այդ վիճակագրությունը որևիցե բանի մասին չի խոսում:

**Բ.Թ.**– Իսկ ի՞նչ կպատասխանեք այն դժգոհություններին, որ շատ կարճ ժամանակահատվածում՝ արտահերթ նիստերով, Աժ–ին են ներկայացվում մեծածավալ օրենսդրական նախագծեր, և պատգամավորները պարզապես ֆիզիկապես ի վիճակի չեն լինում «մարսել» այդ ամբողջը և համապատասխան դիտողություններ կամ առաջարկներ անել:

**Վարչապետ**– Որոշակի օբյեկտիվություն այդտեղ կա, բայց ունենք այն, ինչ ունենք: Մի պահ էլ կլինի, որ ավելի քիչ օրենսդրական նախաձեռնություններ կգնան Աժ, և ավելի երկար քննարկելու ժամանակ կլինի: Ի վերջո, սահմանադրական փոփոխություններ են եղել, վերջնաժամկետներ ունենք, արագ փոփոխությունների խնդիր ունենք: Մենք այդ շքեղությունը չենք կարող մեզ թույլ տալ՝ ամեն օրենսդրական նախաձեռնության վրա մի քանի ամիս ժամանակ ծախսել: Ամեն դեպքում, դիտավորություն չկա:

**Բ.Թ.**– Դուք համայնքներ այցելելիս՝ համայնքապետերին կոչ եք անում՝ երազանք ունենալ: Իսկ Դուք՝ որպես վարչապետ, ի՞նչ երազանք ունեք, երկրի մասշտաբով:

**Վարչապետ**– Տրամաբանական, զարգացող, պոպուլիզմից հեռու, իյուզիաներով չապրող երկիր:

**Բ.Թ.**– Իսկ եթե մի քիչ ավելի թվային տեսքով ներկայացնեք:

**Վարչապետ**– Թվային տեսքը կգա հետո՝ որպես ածանցյալ, հենց որ դառնանք իմ նկարագրած երկիրը: Գիտեք, կարող եմ էլի բնութագրիչներ ավելացնել՝ ավելի մեծ արդարության մակարդակ, ավելի ինտելեկտուալ... Բայց սկզբի ձևակերպումս ավելի կարևոր է: Այն իմաստով, որ բոլորս վերջապես գիտակցենք, որ նախ՝ երկիրը փոխողը մենք ենք, և երկու՝ եթե ուզում ես լավ ապրել, պետք է շատ աշխատես: Մենք մեր հասարակության մեջ մարդիկ ունենք, որ ուզում են քիչ աշխատելով լավ ապրել և պատասխանատվությունն ամբողջությամբ զգում են ուրիշների վրա: Ես երկիր չգիտեմ, որտեղ քիչ աշխատող մարդը լավ ապրի: Բայց ես մեր հասարակության մեջ շատ մարդկանց գիտեմ, որ իրենց լավ ապրելու մեջ մասնակցություն չունեն: Չեն էլ

պատկերացնում, որ պետք է մասնակցություն ունենան, ու պատրաստ են բոլորին քննադատել:

**Բ.Թ.**- Ի՞նչ պետք է անել, որ այդ մտածելակերպը փոխվի: Կոնկրետ կառավարությունից դա որքանո՞վ է կախված:

**Վարչապետ**– Դա, իհարկե, միայն մեզնից չի կախված, բայց մենք մեր բաժին բեռը վերցնում ենք, մենք հստակ խոսում ենք, պոպուլիստական բաներ չենք ասում... Մենք այդ «սիգնալները» հստակ ուղարկում ենք: Հունվարի 3-ից աշխատանքի դուրս գալն էլ է այդ «սիգնալներից»: Մենք այդ շքեղությունը չունենք, որ մինչև հունվարի 8-ը հանգստանանք ու հետո լավ ապրենք: Այդպես չի լինում: Ամերիկացին եթե 2-3 տեղ չի աշխատում, ինքը լավ չի ապրում:

**Բ. Թ.**- Ամերիկացին էլ դեմ չէր լինի՝ քիչ աշխատելով՝ լավ ապրել: Ուղղակի մեր ու իրենց տարբերությունն այն է, որ շատ աշխատող ամերիկացին լավ է ապրում, իսկ Հայաստանում, առավոտից երեկո աշխատելով, շատ մարդիկ հազիվ են ծայրը ծայրին հասցնում:

**Վարչապետ**– Դա էլ կա, ու պիտի այնպես անենք, որ այդպես չլինի: Իմ ասածն այլ բանի մասին է: Օրինակ, կարող եք գնալ ցանկացած գյուղ և այս ասածս փորձել: Տան ցանկապատին, պատուհանների մաքրությանը նայելով՝ այդ բնակչի մասին կարող ես կարծիք կազմել: Նույն գյուղն է, նույն միջավայրը, բայց այդ երկու դետալներով կարող ես հասկանալ՝ այս մարդն առավոտը շո՞ւտ է զարթնում, թե՞ ոչ: Որովհետև շատ բաներ կան, որ փողից չեն կախված...

**Բ.Թ.**- Հանրապետության նախագահը հայտարարեց, որ 2040 թվականին ունենալու ենք 60 մլրդ դոլար ՀՆԱ՝ մեկ շնչի հաշվով՝ 15 հազար դոլար...

**Վարչապետ**– Եթե հարցնում ես՝ կհասնե՞նք այդ ցուցանիշներին, ասեմ, որ այդ տարեկան միջինը 5% իրական տնտեսական աճ ապահովելով՝ կհասնենք:

**Բ.Թ.**- Ոչ, ես չեմ հարցնում՝ 5% տնտեսական աճը և դրա շնորհիվ 60 մլրդ դոլար ՀՆԱ-ի հասնելն իրատեսակա՞ն է, թե՞ ոչ: Ինձ հետաքրքիր է՝ դա մեզ բավարա՞ր է: Այդ տեմպով կունենա՞նք այն երկիրը, որի մասին երազում ենք, թե՞ ավելի ետ կմնանք աշխարհից:

**Վարչապետ**– Եթե նույնիսկ բավարար չէ, սակայն քո կարողությունն այդքան է, ի՞նչ անել: Գրենք՝ 10% աճ, բայց չկարողանանք ապահովել, այդպես ավելի՞ ճիշտ կլիներ: Մենք մեր «մուսկուլների» չափը պետք է հաշվի առնենք: Յուրաքանչյուրն իր տան մեջ բյուջեն ինչպե՞ս է հաշվում. անկախ ընտանիքի անդամների ցանկություններից՝ տեղավորվում է իր հնարավորությունների մեջ: Հիմա մեր կարողություններն այնպիսին են, ինչպիսին որ կան: 2017 թվականի համար կանխատեսել էինք 3.2% աճ, կունենանք ավելի բարձր: 2018 թվականի համար կանխատեսել ենք 4.5%, հետո ժամանակը ցույց կտա: Բայց այս պահին դա ենք տեսնում՝ ելնելով այն «մուսկուլներից», կարողություններից ու պոտենցիալից, որ ունենք:

**Բ.Թ.**- Ո՞վ է մեղավոր, որ մեր մուսկուլները թույլ են մնացել, և ինչպե՞ս ենք աճեցնելու:

**Վարչապետ**– Ինչպե՞ս ենք աճեցնելու՝ ռեգուլյար պարապելու ենք, մինչև այդ մուսկուլներն ուժեղանան: Իսկ թե ո՞վ է մեղավորը՝ հարցազրույցի սկզբում արդեն ասել

եմ, մի քանի պատճառներ նշել եմ՝ տնտեսական վիճակը, ֆինանսական ճգնաժամը, կառավարման բացթողումները, և այլն:

**Բ.Թ.-** Պրն վարչապետ, մեր հասարակությունը շատ անձնավորված է, անձերով շատ բան է պայմանավորված: Մակայն ապրիլին մնացել է մի քանի ամիս, և դեռ պարզ չէ՝ ով է լինելու ՀՀ վարչապետ, ով՝ նախագահ...

**Վարչապետ-** Ասուլիսի ժամանակ ասել եմ, որ այդ հարցին չեմ պատասխանելու: Բայց մի անգամ էլ ասեմ, և այս թեման փակենք: Որքան հասարակությունն անձնավորված է, այնքան ռիսկերը շատ են: Հիմա մենք փորձում ենք համակարգ ձևավորել: Շատ հստակ ձևակերպել ենք, որ ապրիլի 9-ին իշխող կուսակցությունը՝ իր կոալիցիոն գործընկերոջ հետ, որոշում կկայացնի, թե ով որ պաշտոնը կզբաղեցնի:

Իհարկե, անձը միշտ դեր ունի: Բայց անձի դերը որքան մինիմիզացվում է, որքան համակարգը կարողանում է անձի լավ կարողությունները մեծացնել, և հակառակը՝ ամոռտիզացնել կամ սահմանափակել (եթե երկրի գլուխ որևէ պատահական մարդ հայտնվի), այդ համակարգն ավելի կանխատեսելի է և հեռանկարային:

**Բ.Թ. –** Ես չեմ հարցնում՝ Դուք ի՞նչ պաշտոն եք ստանձնելու ապրիլի 9-ից հետո: Ինձ Ձեր կարծիքն է հետաքրքիր՝ այս անորոշ վիճակը բացասաբար չի՞ ազդում բիզնեսի և տնտեսության վրա:

**Վարչապետ-** Ցավոք սրտի, այդպես է: Պետք է ընդունենք, որ այդպես է, և քայլ առ քայլ ձևավորելով իշխանություն, պետք է բերենք նրան, որ այդ գործոնների հիման վրա շատ սպասումներ չլինեն: Իսկ մոտեցումը՝ «եկեք սպասենք երկուշաբթիին, որ տեսնենք՝ ինչ է լինում», իհարկե, տնտեսության վրա որոշ ազդեցություն ունենում է:

**Բ.Թ.-** Կա՞ ինչ-որ բան, որի մասին կուզեիք ասել, սակայն հարց չհնչեց:

**Վարչապետ-** Շատ կցանկանայի, որ կարողանանք ներշնչել մարդկանց, որ ամեն ինչ իրենց ձեռքում է: Դա պետք է անենք ձեր՝ լրատվական դաշտի օգնությամբ: Լրագրողներին ու, մասնավորապես, տնտեսական լրագրողների միջոցով միայն կարող ենք հասարակությանը ներկայացնել՝ որտեղ ենք և ուր ենք գնում, և հետադարձ կապը ստանանք՝ թեկուզ օբյեկտիվ քննադատություններով ու դիտողություններով: Նորից ասեմ, այդպիսի հրաշք չի լինում, որ մարդ ալարի, առավոտը շուտ չգարթնի, չաշխատի ու բոլորին մեղադրելով՝ իր վիճակը բարելավի: Յուրաքանչյուրից շատ բան է կախված, սա է իմ ամենակարևոր, այսպես ասած, ամենակարևոր մեսիջը: